ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___»_____ 2019թ վ ակ ան ի N_____-Լ

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայ աստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

Հաստատել Տրանսպորտի բնագավառի բարեփոխումների և շուկայի կարգավորման ռազմավարությունը և դրա գործողությունների ծրագիրը՝համաձայն հավելվածի:

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
——————ի ———-ի N ———-Լ որոշման

ԾՐԱԳԻՐ
Տրանսպորտի բնագավառի բարեփոխումների և շուկայի կարգավորման ռազմավարության և դրա գործողությունների

1. Ծրագրի խնդիրներն ու նպատակները

Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայման է տրանսպորտի ոլորտի կայուն զարգացումը, հնարավորությունների գնահատումն ու շարունակական կատարելագործումը:

Տրանսպորտի ոլորտում իրականացվող ռազմավարության հիմնական նպատակն է արդյունավետ, բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից կայուն զարգացող տրանսպորտային ենթակառուցվածքների ու ծառայությունների ստեղծումը և միջպետական համագործակցության ու ապրանքաշրջանառության խթանումը, ապահովելով բնագավառում հավասար մրցակցային պայմաններ: Տրանսպորտի ոլորտի շուկայի կարգավորման ռազմավարությունը պետք է նպաստի տնտեսության զարգացմանը, տրանսպորտային ծառայությունների որակի և անվտանգության մակարդակի բարձրացմանը, ապրանքաշրջանառության ծավալների մեծացմանը, փոխադրումների արդյունավետության բարձրացմանը:

Արդյունավետ աշխատող ինտերմոդալ բեռնահամալիրների ստեղծումը, որը փոխադրողներին, բեռնափոխադրողներին և բեռնափոխադրող ընկերություններին կընձեռի նոր հնարավորություններ՝ բարելավելով առևտրային հոսքերը և գործարար միջավայրը: Փակ սահմանների վերաբացումը, օրենսդրության ներդաշնակեցումը Եվրամիության օենդրությանը բեռնափոխադրման նոր հնարավորություններ կստեղծի դեպի Եվրոպա և ավելի հեռու ուղևորվող բեռների համար:

Հայաստանի Հանրապետության համար տրանսպորտի զարգացման հարցում լուրջ խոչընդոտներ են հանդիսանում երկրի բնակլիմայական պայմաններն ու տեղագրությունը, ինչպես նաև աշխարհաքաղաքական իրավիճակը, որոնք հանգեցնում

են տրանսպորտային բարձր ծախսերի։ Դեպի ծով ելք չունեցող Հայաստանի համար միջազգային համագործակցության առումով կարևոր ռազմավարական նշանակություն ունի ցամաքային ճանապարհային կապը, ինչը խոցելի խնդիր է, քանի որ չորս հարևան երկրների հետ սահմաններից բաց են միայն երկուսը՝ հյուսիսում Վրաստանի հետ և հարավում Իրանի հետ։ Փակ սահմանները հանգեցնում են տրանսպորտային ծախսերի զգալի աճին, միջազգային և տարանցիկ առևտրի հնարավորությունների սահմանափակմանը, ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների սահմանափակ զարգացմանը։

Ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացումը և տրանսպորտային ծախսերի կրճատումը ուղղակիորեն տնտեսական զարգացման խթան են հանդիսանում։ Տրանսպորտի գործունեության արդյունավետությունը հնարավոր է բարելավել հետևյալ միջոցներով.

ա) փոխադրամիջոցների շարժակազմի արդիականացում

բ) լոգիստիկայի արդյունավետության բարձրացում,

գ) ենթակառուցվածքների բարելավում,

դ) վերահսկողության բարձրացում,

ե) տրանսպորտի ծառայությունների շարունակական զարգացում,

զ) տրանսպորտային ծախսերի կրճատում։

Տնտեսական զարգացմանը նպաստելու համար տրանսպորտը պետք է գործի արդյունավետ և անվտանգ կերպով։ Այն նաև պետք է նպաստի սոցիալական և բնապահպանական նպատակների իրականացմանը։ Այդ առումով առանձնապես կարևորվում է տրանսպորտի բնագավառի կառավարման և վերահսկողության արդյունավետության բարձրացումը, ինչն իրականացվում է օրենսդրական բարեփոխումների և միջազգային համաձայնագրերի պահանջներին համապատասխանեցնելու միջոցով։

Տրանսպորտային համակարգի բարելավումից է կախված մի շարք հնարավորություններ: Մասնավորապես, զբոսաշրջության ծավալների աճը, առևտրաշրջանառության աճը և պոտենցիալ շուկաների հետ կապերի բարելավումը:

Ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացումը և տրանսպորտային ծախսերի կրճատումը ուղղակիորեն խթանում են տնտեսության զարգացմանը:

2. Ծրագրի հիմնական ուղղությունները

Ծրագրի հիմնական շեշտադրումներն ուղղված են ենթաոլորտային ռազմավարական գործողությունների մշակմանն ու իրականացմանը:

Ենթակառուցվածքների զարգացման առումով կարևոր նախապայման է միջազգային տրանսպորտային միջանցքների ստեղծումը, ակտիվների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը և միջազգային ստանդարտներին համապատասխանող տրանսպորտային ծառայությունների մատուցումը:

Տրանսպորտի գործունեության արդյունավետությունը հնարավոր է բարելավել ոլորտային ռազմավարական ծրագրերի իրականացման արդյունքում:

1) **Ավտոմոբիլային տրանսպորտ**

Վերջին տարիներին տրանսպորտային ծառայությունների կառուցվածքը մի շարք օբյեկտիվ պատճառներով զգալիորեն փոխվել է ի նպաստ ավտոմոբիլային տրանսպորտի: Տրանսպորտի այս տեսակին բաժին է ընկնում բեռնափոխադրումների շուրջ 85%-ը և ուղևորափոխադրումների շուրջ 90%-ը:

Այս առումով կարևորվում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի զարգացման բարձր տեմպերը, որի համար անհրաժեշտ է խթանել տրանսպորտային միջոցների շարժակազմի արդիականացումը, բարձրացնել վերահսկողության մակարդակը, միջազգային համագործակցության շարունակական զարգացումը և զարգացնել տարանցիկ փոխադրումները: Տրանսպորտային համակարգի զարգացումը և գործունեության արդյունավետության բարձրացումը դիտվում է որպես տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման, սոցիալական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացման և արդյունավետության ավելացման, աշխատուժի

շարժունակության մակարդակի բարձրացման, ինչպես նաև տարածքային զարգացման անհամաչափությունների վերացման նախապայման:

Ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման կարևոր նախապայման է օրենսդրական բարեփոխումների միջոցով իրավական դաշտի կատարելագործումն ու ինտեգրումը միջազգային համաձայնագրերով սահմանված կարգավորումներին:

Բեռնափոխադրող ընկերությունների գործունեությունը դյուրացնելու և ոլորտի զարգացման նպատակով ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների ոլորտը առավելագույն ազատականացված է: Սակայն ոլորտում միջազգային մակարդակով զարգացման բարձր տեմպերը, ցամաքային կապի սահմանափակ հնարավորությունները մրցակցության բարձր պահանջներ են սահմանում ոլորտում գործունեություն իրականացնողների համար: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների շուկայի կարգավորման առումով անհրաժեշտ է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների սոցիալական օրենսդրությունը ներդաշնակեցնել միջազգյին իրավական կարգավորումներին:

Կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք համակարգային լուծման կարիք ունեն: Միջմարզային և միջպետական երթուղային ցանցերը բավականաչափ ինտեգրված չեն, հանրապետության ոչ բոլոր համայքներն են ապահովված տրանսպորտային սպասարկմամբ, բացակայում է տոմսերի միասնական համակարգը: Ներկայումս գործում են մոտ 153 միջմարզային և 263 ներմարզային երթուղիներ, որոնք սպասարկում են 682 համայնքներ: Մոտ 220 համայնքներ չունեն տրանսպորտային սպասարկում:

Արդյունավետ տրանսպորտային հաղորդակցություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել միասնական երթուղային ցանց, որի արդյունքում հանրապետության բոլոր համայնքները կապահովվեն տրանսպորտային սպասարկմամբ, կկրճատվի ուղևորության համար ծախսվող ժամանակահատվածը, կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցները կհամապատասխանեցվեն փաստացի ուղևորահոսքի ծավալներին, կբարձրանա շարժակազմի շահագործման արդյունավետությունը և ոլորտի վերահսկողության մակարդակը, երթուղիների ուղեգծերը կդառնան փոխհամաձայնեցված, կներդրվեն միասնական տոմսավորման և տրանսպորտային

միջոցների տեղորոշման համակարգեր, կբարձրանա վերահսկողության մակարդակը: Այդ նպատակով ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքը: Մաթեմատիկական մոդելավորման միջոցով պետք է մշակվի օպտիմալ երթուղային ցանցը: Միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրման արդյունքում կկիրառվի ճկուն զեղչային համակարգ:

Միասնական երթուղային ցանցի ստեղծումը կապահովի բոլոր բնակավայրերի տրանսպորտային սպասարկումը, տրանսպորտային միջոցները կհամապատասխանեցվեն իրական ուղևորահոսքի պահանջներին, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունքում կբարձրանա ուղևորների սպասարկման որակը:

2) Երկաթուղային տրանսպորտ

Հայկական երկաթուղին 2008թ. հունիսի 1–ից կոնցեսիոն հիմունքներով 30 տարով փոխանցվել է Ռուսական երկաթուղիների մասնաճյուղին: Երկաթուղու առջև ծառացած մարտահրավերներն են երթևեկության սահմանափակ հնարավորությունները, ավտոմոբիլային տրանսպորտի մրցակության բարձր մակարդակը:

Երկաթուղու կոնցեսիայի հաջող իրականացման արդյունքում անհրաժեշտ է զարգացնել ինտերմոդալ և լոգիստիկ ծառայությունները, մեծացնել փոխադրումների ծավալները, միջոցներ ձեռնարկել ցանցի զարգացման համար, բարձրացնել երթևեկության անվտանգության մակարդակն ու մատուցվող ծառայությունների որակը: Երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացման համար կարևորագույն պայման է երկաթուղային շարժակազմի արդիականացումն ու նորացումը, երկաթուղային սակագների կատարելագործումը, օրենսդրության ներդաշնակեցումն ու կատարելագործումը, մատուցվող ծառայությունների որակի և երթևեկության անվտանգության մակարդակների բարձրացումը:

Երկաթուղային ծառայությունների սակագների ձևավորման նոր մոտեցումների որդեգրումը հնարավորություն կտա բարձրացնելու երկաթուղային տրանսպորտով

բեռնափոխադրումների մրցունակությունը, մեծացնելու բեռաշրջանառության ծավալները:

Երկաթուղային տրանսպորտով երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացման կարևորագույն նախապայման է երկաթուղային շարժակազմի նորացումն ու արդիականացումը:

3) Քաղաքացիական ավիացիա

Երկրի համար կարևոր ռազմավարական նշանակություն ունի քաղաքացիական ավիացիան: Ոլորտի ռազմավարությունը պետք է ուղղված լինի ավիացիայի համակարգի զարգացման, ավիաչվերթերի աշխարհագրության ընդլայնման, հանրապետության տարածքում օդանավակայանների վերաբացման, ներքին ուղևորատար ծառայությունների զարգացման, մրցունակ գներով օդային ծառայությունների մատուցման, բարենպաստ իրավապայմանագրային դաշտի ապահովման, արդյունավետ աշխատող օդանավակայանների միջոցով միջազգային համակողմանի կապի ապահովման վրա:

Հանրապետությունում ներկայումս շահագործվում են Զվարթնոց, Շիրակ և Էրեբունի օդանավակայանները: Զվարթնոց և Շիրակ օդանավակայանները կառավարվում և շահագործվում են Արմենիա միջազգային օդանավակայանների (ԱՄՕ) կողմից: ԱՄՕ-ն բարեկարգել է հիմնական միջազգային օդանավակայանը՝ Զվարթնոցը, ներառյալ ավարտվել է ուղևորային նոր համալիրի կառուցման առաջին փուլը: Ըստ Զվարթնոց օդանավակայանի ապագա հատակագծի՝ բարեկարգման աշխատանքների ավարտից հետո օդանավակայանը կունենա տարեկան 3 միլիոն ուղևոր սպասարկելու հնարավորություն (ինչը համարժեք է ՕՏՄԱ-ի ծառայությունների «B» մակարդակին):

2018 թվականին ՛՛Արմենիան Հելիքոփթերս՛՛, ՛՛Սքայբոլ՛՛, ՛՛Ատլանտիս Արմենիան Էյրլայնզ՛՛ ավիաընկերություններին առաջին անգամ տրամադրվել է օդանավ շահագործողի վկայականներ: Այս ավիաընկերությունների ստեղծմամբ Հայաստանում սկիզբ է դրվել փոքր ավիացիայի զարգացման գործընթացը, որի շրջանակներում ՛՛Արզնի՛՛ օդանավակայանի աերոդրոմը սահմանվել է որպես համատեղ բազավորման աերոդրոմ՝ մասնավոր օդաչուների պատրաստման գործընթացի շրջանակներում

քաղաքացիական ուսումնավարժական թռիչքների իրականացման համար, աշխատանքներ են տարվում ավիացիոն քարտեզը լրամշակելու ուղղությամբ՝ դրա վրա արտապատկերելով 60 մետր և ավելի բարձրություն ունեցող արհեստական խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվությունը:

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են Հայաստանն աշխարհի տարբեր կետերին կապող երթուղիների ցանցի ընդլայնումը, նորանոր ավիաընկերությունների ներգրավումը ՀՀ ավիացիոն շուկա, ՀՀ տեղական ավիաընկերությունների հնարավորությունների ընդլայնումը, փոքր ավիացայի զարգացումը:

Իրականացվող միջոցառումները կնպաստեն Հայաստանում ավիացիոն էկոհամակարգերի զարգացմանը, օդային փոխադրումների գների վերանայմանը, նոր գաղափարների ներգրավմանը:

4) Ջրային տրանսպորտ

Ներկայումս հանրապետությունում կանոնակարգված չէ ջրային տրանսպորտի գործունեության բնագավառը: Բացակայում են ջրային տրանսպորտի միջազգային համաձայնագրերի պահանջներին համապատասխան օրենսդրական կարգավորումները, ինչը խոչընդոտում է ջրային տրանսպորտի ոլորտում միջպետական համագործակցությանը և ջրային տրանսպորտով իրականացվող միջազգային փոխադրումների պոտենցիալի օգտագործմանը:

Այս առումով անհրաժեշտ է միանալ ջրային տրանսպորտի ոլորտում գործող միջազգային համաձայնագրերին, տեղայնացնել դրանցից բխող ջրային տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջները, կանոնակարգել ջրային տրանսպորտի ոլորտում գործունեություն իրականացնողների պարտականություններն ու պատասխանատվությունը, սահմանել ջրային տրանսպորտային միջոցների գործունեությունը կարգավորող տեխնիկական կանոնակարգերը, ջրային տրանսպորտի ոլորտում վթարների հետաքննությունը կարգավորող հիմնարար սկզբունքները, միջազգային ծովային անվտանգության ապահովման և նավերից առաջացող աղտոտման կանխարգելման պահանջները, ծովային վթարների և պատահարների հետաքննության

մեթոդաբանությունը, նավաստիների աշխատանքի ու հանգստի ռեժիմի և վերապատրաստումների գործընթացը:

Ջրային տրանսպորտի գործունեության իրավական կարգավորումը հնարավորություն կտա ստեղծելու դրոշի պետության նավատորմ, իրականացնելու ջրային տրանսպորտով բեռնափոխումներ և ուղևորափոխադրումներ, զարգացնելու միջպետական համագործակցությունը ջրային տրանսպորտի ոլորտում: Ոլորտի օրենսդրական կարգավորումները Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն կընձեռեն օգտագործելու ջրային տրանսպորտի պոտենցիալը, ինտեգրվելու միջազգային ջրային փոխադրումների գործընթացներին, ստեղծելու նոր ուղիներ միջազգային բեռնափոխադրումների զարգացման համար:

3. Միջպետական համագործակցություն

Ներկայիս գլոբալիզացիայի պայմաններում Հայաստանը շարունակում է ուժեղացնել իր տնտեսության և այլ երկրների տնտեսությունների միջև կապերը միջպետական համաձայնագրերի միջոցով: Ներդրումների և արտահանումների խրախուսման, ինչպես նաև գործարար միջավայրի զարգացման նպատակով տրանսպորտի ոլորտի քաղաքականությունն ուղղված է միջազգային և տարածաշրջանային համագործակցության խոչընդոտների վերացմանը և ՀՀ տրանսպորտային օրենսդրության համապատասխանեցմանը միջազգային համձայնագրերի և ստանդարտների պահանջներին:

Հայաստանի Հանրապետությունը աշխատանքներ է իրականացնում Եվրամիության, նրա անդամ պետությունների և եվրոպական այլ երկրների հետ բարեկամական հարաբերությունները խորացնելու և գործընկերությունն ընդլայնելու ուղղությամբ: Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) կիրարկումը դիտվում է որպես Հայաստանի զարգացմանն ուղղված կառավարության բարեփոխումների օրակարգին նպաստող նշանակալից գործոն: Գործընկերության զարգացման հիմնական ուղղությունը օրենսդրության ներդաշնակեցումն է:

4.Եզրափակիչ դրույթներ

Տրանսպորտի բնագավառի բարեփոխումների և շուկայի կարգավորման ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի տեսլականն է՝ արդյունավետ, կայուն զարգացող տրանսպորտային ենթակառուցվածքների և ծառայությունների մշակման միջոցով տրանսպորտային համակարգի համաչափ և երկրի կայուն զարգացման համար առավել օպտիմալ տրանսպորտային փոխադրումների կառուցվածքի ձևավորումն է:

Տրանսպորտի բնագավառում իրականացվող կառավարման բարեփոխումներն ուղղված են տրանսպորտի բնագավառի շուկայի կարգավորմանը, տրանսպորտի տեսակների բաշխվածքի մոդելավորմանը, օրենսդրական բարեփոխումներին և ոլորտի կայուն զարգացմանը: Ռազմավարության ծրագրի նպատակն է՝ օգտագործել գոյություն ունեցող հնարավորությունները առկա մարտահրավերները հաղթահարելու համար:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Տրանսպորտի բնագավառի բարեփոխումների և շուկայի կարգավորման ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառումը պայմանավորված է փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի մոտ տեղի ունեցած Հայաստանի ռազմավարության շրջանակի ոլորտային ռազմավարությունների քննարկումների հանձնարարականի ապահովման անհրաժեշտությամբ:

Տրանսպորտի ոլորտում իրականացվող ռազմավարության հիմնական նպատակն է արդյունավետ, բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից կայուն զարգացող տրանսպորտային ենթակառուցվածքների ու ծառայությունների ստեղծումը և միջպետական համագործակցության ու ապրանքաշրջանառության խթանումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար ռազմավարական նշանակություն ունի տրանսպորտի բնագավառը: Ոլորտում առկա են մարտահրավերներ, որոնց ռազմավարական լուծումը կարևորագույն նախապայման է տրանսպորտային ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացման և տրանսպորտային ծախսերի կրճատման համար:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Անհրաժեշտ է իրականացնել տրանսպորտի բնագավառի շուկայի վերլուծություն և մշակել բնագավառի բարեփոխումների ռազմավարության գործողությունների ծրագիր, որի հիմնական շեշտադրումներն ուղղված են ենթաոլորտային ռազմավարական գործողությունների մշակմանն ու իրականացմանը:

Տրանսպորտի բնագավառում առկա խնդիրները կարգավորելու համար անհրաժեշտ է զրգացնել ենթակառուցվածքները, ձևավորել կառավարման արդյունավետ համակարգ և տրանսպորտային ծառայությունների մատուցումը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին:

2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում արդյունավետ, բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից կայուն զարգացող տրանսպորտային ենթակառուցվածքների և ծառայությունների մշակման միջոցով տրանսպորտային համակարգի համաչափ և երկրի կայուն զարգացման համար առավել օպտիմալ տրանսպորտային փոխադրումների կառուցվածքի ձևավորումն է: միջազգային ստանդարտներին համապատասխանող տրանսպորտային ծառայությունների մատուցումը:

Ծրագիր-ժամանակացույց

Տրանսպորտի բնագավառի շուկայի կարգավորման ռազմավարության գործողությունների ծրագրի

NN	Նպատակը	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
1	Կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետ կազմակերպում, սպասարկման որակի և վերահսկողության մակարդակի բարձրացում	Միասնական երթուղային ցանցի ստեղծում	Հանրապետության բոլոր համայնքները կապահովվեն արդյունավետ տրանսպորտային սպասարկմամբ, կբարձրանա ուղևորափոխադրումների սպասարկման որակն և վերահսկողությունը, կներդրվի միասնական տոմսավորման համակարգ և ինտերակտիվ քարտեզ	2021թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	Հայաստանի Հանրապետությունում ջրային տրանսպորտի գործունեության օրենսդրական կարգա-վորմանն ուղղված միջոցառումների իրականացում	Ջրային տրանսպորտի գործունեության իրավական կարգավորում	Ջրային տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջների սահմանում, ոլորտում գործունեություն իրականացնողների պարտա-կանությունների ու պատաս-խանատվության սահմանում, դրոշի պետության նավա-տորմի ստեղծում, ծովային անվտանգության ապահո-վում, ոլորտում ներգրավված անձանց սոցիալական օրենս-դրության կանոնակարգում, ոլորտում միջպետական	2020-2023թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում

			համագործակցության զարգացում		
3.	Երկաթուղային տրանս-պորտով երթևեկության անվտանգության մակար-դակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	Երկաթուղային շարժակազմի (ներառյալ մերձքաղաքային հաղորդակցությունում) նոր շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում:	Երթևեկության անվտանգու-թյան մակարդակի և մատուցվող ծառայություն-ների որակի բարձրացում և բազմազանեցում	2019-2023թթ.	Կոնցեսիոն պայմանագրի ներդրումային ծրագրով 2019-2023թթ.-ի համար սահմանված ծա-վալներին համա-պատասխան
4.	Երկաթուղու սակագնային բարելավում	ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի աշխատակազ-մերի սակագնային քաղաքակա-նության փորձագետների հետ բանակցությունների վարում, նոր մոտեցումների ձևավորում, համաձայնությունների ձեռք բերում	Երկաթուղային փոխադրումների սակագների կատարելագործում	2019-2023թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
5.	Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված համապար-փակ և ընդլանված գործընկերության համաձայնագրի պահանջների ապահով-ման նպատակով տրանսպորտի ոլորտը կարգավորող օրենսդրության ներդաշ-	Իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Գործող օրենսդրության արդիականացում և կատարելագործում, մատուցվող ծառայությունների որակի և երթևեկության անվտանգության մակարդակների բարձրացում	2023թ.	Օրենքով չարգելված այլ միջոցներ

	նակեցում				
6.	Ավիաչվերթերի աշխարհագրության ընդլայնում և ավիաընկերությունների թվի ավելացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում	Հանդիպումներ և քննարկումներ ավիաընկերությունների հետ, կոմերցիոն հիմնավոր առաջարկների և տեղեկատվության ներկայացում դեպի ՀՀ օդային հաղորդակցությունների իրականացման հնարավորությունների ու հեռանկարների, իրազեկվածության բարձրացման վերաբերյալ: Համապատասխան իրավական դաշտի ձևավորում և կատարելագործում՝ կանխատեսելի կարգավորումների ապահովմամբ: Հայաստանում ներդրումների միջոցով ավիաընկերություն հիմնելու հնարավորությունների քննարկում, գրանցված ավիաընկերությունների հնարավորությունների վերլուծում և մեծացում, հետագա համագործակցության ձևաչափերի հստակեցում: Բյուջետային հիմնական ավիաընկերությունների հետ՝ դեպի ՀՀ փոխադրումների իրականացման պայմանների քննարկում: Որոշակի երթուղիներ	Ընդլայնել Հայաստանն աշխարհի տարբեր կետերին կապող օդային երթուղիների ցանցը, նորանոր ավիաընկերությունների ներգրավում ՀՀ ավիացիոն շուկա,ՀՀ տեղական ավիաընկերությունների հնարավորությունների ընդլայնում	2019թ.-2023թ.	Ֆինանսավորում չի պահանջվում

		շահագործող ավիաընկերությունների ուղևորներին օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի վճարումից ազատման նպատակով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի մշակում:			
7	«Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների գործունեության բարելավում	«Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում ուղևորների սպասարկման համապատասխան գոտիների (հաշվառման, նստեցման, ժամանման) ընդլայնում: «Շիրակ» օդանավակայանի աերոդրոմի տարրերի վերանորոգում	Մեկնող և ժամանող ուղևորների սպասարկման մակարդակի բարձրացում: Աերոդրոմին ներկայացվող միջազգային պահանջների պահպանում	Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1532 որոշմամբ հաստատված «Զվարթնոց» և «Շիրակ» օդանա-վակայանների 2018-2022 թ.թ. մաստեր պլանի	«Արմենիա» միջազգային օդանավա-կայաններ» ՓԲԸ-ի միջոցների հաշվին
8	ՀՀ ներքին ավիափոխա-դրումների կազմակեր-պում	Աջակցություն ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի օդանավակայանի վերագոր-ծարկման աշխատանքներին: Աերոդրոմի սերտիֆիկացում	Երևան-Կապան-Երևան ավիափոխադրումների իրականացում	Պայմանավոր-ված սերտիֆի-կացման հայտի ժամկետի ներկայացմամբ	Ֆինանսավորում չի պահանջվում
9	Փոքր ավիացիայի զար-գացմանն ուղղված պայմանների ստեղծում	ՀՀ օդային տարածքի կառուցվածքի վերակազմա-կերպում: Ռիսկերի գնահատում	Նպաստել ընդհանուր նշանակության ավիացիայի թռիչքների աշխարհագրության ընդլայնմանը և անվտանգության ապահովմանը	Մինչև 2020թ.	Ֆինանսավորում չի պահանջվում